


ԲԱԺԱՆՈՐ՝ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Նշարկոյ համար	
Տարեկան	12 ֆր.
Վեցամսայ	6 »
Սրբապատկանի համար	
Տարեկան	15 »
Վեցամսայ	8 »
Անտիկոյի համար	
Տարեկան	3 ֆր.
Վեցամսայ	1.50 »
ԿԱՆՈՒԿՆԻ ՎՃԱՐՆԵԼԻ	

Մանուկան սոյոք ստալիկ երեսին համար 40 սակարկ է: Իսկ վերջին երեսի համար 20 սակարկ է: Երեքին անցի անգամներու համար 20 Օ10 զեղք կըրայ:

Պոչարիոյ համար ձեռքի (15 ՍԱՆԹԻՄ)



ՇԱՐՋՈՒՄ

B. P. Kalémecarian
Mechitharistengasse W. 4
Vienne
(Autriche)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՎԱՆ ԵՒ ԳՐԱՎԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹ ԶՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՈՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

Նամակ և գրամ զրկեց
կարգադրեանն հասցիկն

Редакция на вестникъ
«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

Կրտսիւնք ևս չեն տրուիր

Սրբապատկանի համար ձեռքի (20 ՍԱՆԹԻՄ)

ՎԱՌՆԱՅԻ ՈՐԲԱՆԱՍԸ

Երբ վառնայի Որբախնամը բացվեց, «Շարժում»-ի միջոցառնակառուցները եղան թէ ինչո՞ւ այդ Որբախնամը «Վասպուրական»-ի կոչվեց, բայց ոչ Հայկական մարդիկ գտնվեցին որ կուսուցին այդ արդարացի նկատույթեան դէմ և ուղեցին տարբեր բացատրութիւններ տալ:

Մենք մինչև օրս լռեցինք, որովհետև ուղեցինք տեսնել թէ ինչ ձևով պէտք է գործէ այդ Որբախնամը, որի երկու սեռի վարչութիւններն էլ ինքնաշնորհաբար էին գրեթէ մանաւանդ փափուկ սեւի վարչութիւնը:

Շուտով երեք ամիսը պէտք է լրանայ, Վասպուրականի Որբախնամը դրամ է գանձում, Թաղական Խորհուրդը դեռ կանոնադիրը չէ հաստատել, պաշտօնագէտ իր հսկողութեան տակ չէ առել, երկու մասնախմբերը գործում են առանց իրենց անդամներին հաշիւ տալու թէ՛ ինչ եղան հաւաքված գումարները, ուղարկվեցին արդեօք իրենց նպատակին ծառայելու համար, թէ դեռ մնում են այսինչ և այնինչ անհատի մօտ:

Որբախնամի անդամներից մէկը ճամբորդեց. ո՞ւր, ինչո՞ւ, ո՞ր կանոնի համաձայն, ո՞րի ծախսով, ոչ ոք բան հասկացաւ. թէև, «Շարժում»-ի միջոցառնակառուցներից մէկը այդ հարցերը ուղեց Որբախնամի վարչութեան:

Գործվում է մթի մէջ, խնամական սիստեմով. կանանց ճիւղի ինքնաշնորհ վարչութեան անդամուհիներից մէկի եղբայրը հաւաքչի պաշտօն է կատարում, որբերի համար հաւաքված գումարներից սրոջ տոկոս ստանալով. կարծես թէ Վառնայի մէջ մի մարդ չէր գտնվի որ յանձն առնէր առանց վարձի որբերի դրամը գանձել:

Ո՞վ է մեղաւոր որ այսպէս է լինում. իրենք անդամները և անդամուհիները, մանաւանդ նրանք, որոնք առաջին ժողովից

յետոյ են գրվել և մեծամասնութիւնը են կազմում:

Ուստի մենք առաջարկում ենք երկուսն Որբախնամի անդամներին՝ ի հարկէ նրանց, որոնք խնամական հաշիւներով չեն մասնակցում այդ գեղեցիկ գործին, առանց վարանելու, շուտով ընդհանուր ժողով պահանջել. վերցնել Վասպուրական անունը. կոչել Հայկական Որբախնամ, խնդրել որ Թաղական Խորհուրդը իր պաշտօնական հսկողութեան տակ առնի Որբախնամը, և կարգադրել որ գումարները շուտով և միմիայն Պատրիարքարանի միջոցառնակառուցի որբերին հասնեն:

Մենք ունենք հայ որբեր, ոչ նահանգային. այդ որբերի խնամակարգը հանդիսանում է Պատրիարքարանը, որին ամէն կողմից տասնեակ հազարներով ֆրանկներ են հաւատում, և չը պէտք է ուրանալ որ Պատրիարքարանը այդ գործը բաւական խնամքով է կատարում: Յամենայն դէպս Պատրիարքարանը աւելի վստահելի է, քան ու է անձանթը և անընդունակ անձնաւորութիւն:

ՎԱՐՈ

ԹՂԹԱՎՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՕԼԻՍ, 16 Յունիս

Այգոստին բորձը շրջանակները լուռ են:

Էֆէնալիմ իշտէ զինուորական տուրքի մէկ տարեկանը Սուլթանը նուիրեց, ալ ատկէ աւելի ի՞նչ կուզէք: Աս է մեր թուրքու հայ խառնուրդ տղաներու տրամաբանութիւնը: Համիտ լաւ սերտած է անոնց բնաւորութիւնը, մերթ ընդ մերթ փոքրիկ ոսկր մը կը նետէ ակուններուն տակը և տարի մը, երկուք իր կայսերական ակունջները կաղաւթէ իր սիրած հայ աղաներու վայնասուններէն...

Մալիեէն ե՛լած պատասխանը կիրիկիոյ ընտրութեան մասին կարգացուցեր է կրօնական և խա-

ռըն ժողովներու մէջ: Արթին եւ իր արբանեակները «լիզ ծռելու», «խոնարհելու» կողմը կանցնին. պէտք է ընդունել վեց անուն ցանկը ներկայացնելու պահանջը: Արթին հայոց ազգային ժողովներուն եկած պահուն միշտ ու միշտ կը մտածէ. եթէ ես առանկ չը խօսիմ՝ Համիտ կրնայ զիս պաշտօնէս հեռացնել, ուստի միշտ կը հողայ որ իր տէրը իրեն աւելի հասնի և գոհ մնայ: Արթին ալ ժողովին մէջ իր շնիկներն ունի, որոնք իրեն հետ ու ետեւէն կը վազեն միշտ իրենց մանր մունր հաշիւներու համար:

Օրմանեան ու քանի մը անդամներ չեն համաձայնիր ևս տրվել իր պատասխաններն զրկելով, «կայսերական իրաւունքներ է՝ ընտրութիւնը բնիկ ըլտաւանդական սովորութեան»: Օրմանեան նորէն եկեղեցի չի իշնար որ Համիտի Համար աղօթէ: Մեր աս շնա՛ւան քծնութեան օրբերուն մէջ՝ աս ալ բան մըն է... Եկեղեցի չի իշնար, բայց Զինովիէֆի գալուն պէս անոր իսկոյն այցելութեան վաղեց, աւանց վախնալու թէ Արթիար կամ այլ հրէջ մը զինքն ալ կրնան Գաշնակցականներու շարքը դասել և ուսուական գործիք անուանել:

Զինովիէֆի հոս հասնելուն պէս, երկրորդ օրը Բ. Գուռը և պալատ գնաց ու շատ մը խօսակցութիւններու հետ ալ այնպէս որ ինքնորոշուրկի նախարարական խորհուրդը կը ցանկայ իրականացած տեսնել իր բացակայութեան տրուած երկու նոթաներուն բովանդակութիւնը, հայկական գաւառներու և հայերու վերաբերմամբ:

Երեւի Զինովիէֆ անչափ ալ գոհ չի պիտի ըլլայ Օրմանեանի հրաժարականը առաջափ թէպէտ առնելէն:

Հայ պաշտօնեայէ մը կարմիր կնիքով ստակ էին ուզած և ան ալ իսկոյն ոտտիկանութեան է իմացուցեր, Աս օրբեր ալ, ստոյգ ուղիւրներէ կիմանալ որ մեր

Վերակազմեալները՝ խիստ նեղուելով նիւթական ստիպուեր են «կարմիր կնիքը» խօթել շատ մը սպառնաձեւ թուղթերու տակ և զրկել բաւական թուով անձերու: Բայց դառն իրականութիւն... և ոչ մէկ փարա մը ստացեր են:

Մի՞թէ վարմանալի է աս: «Գետինն ալ ականջ ունի», կըսէ թրքական տառը: Աս դիմումի անձերն ալ մարդ են, ծանօթներ ունին. անց ու դարձէն ալ լուրեր կառնեն. տեսան որ Օրմանին և Արթինին ալ սպառնացիք «կծու» և «վճռողական» դարձուած քննութիւնը բայց գործադրել չի կրցիր... Ամէն մարդ հասկցաւ ձեր ակառանքու «խածնողական ուժը»: Է՛հ, ալ ով ստակ կուտայ:

Բարեկամներ, ձեր շնայած «սպառնալիքներու» անխուսափելի արդիւնքն է ատ. մեղաւորը դուք էք. վարժեցուցեր էք ժողովուրդը, «քամի» սպառնալիքներու:

Նորէն լրտեսները Հնչակեան կնիքով 100—200—500 սակի պահանջի սպառնազրբերով մէջտեղ ելան:

Բաւական հարուստ ու ծանօթ անձ մը՝ Կ. ստացեր է ատանկ թուղթ մը. Ո՞վ է զրկողը: Կը հարցնեմ Գաշնակցականներէն մեկուն. մինք սկզբունքով զէմ ենք աս ծանր պարտղաներու մէջ հոս բռնութեամբ դրամ հաւաքելու, որովհետև չը տուած պարագային էապէս պիտի դիմենք բռնութեան, իսկ ատ մեր նպատակներուն ձեռնառ չէ: Կը հարցընեմ Վերակազմեալներէն մեկուն. մենք շատերու դիմած ենք կըսէ, բայց ատ անձին՝ երբէք: Կը փնտռեմ տարբեր կուսակցութիւն մը՝ թող ներեն ինձ միւս կուսակցապետերը, գոյութիւն չունին: Է՛հ ուրեմն ո՞վ է «Հընչակեան կնիքով» սպառնազիր զրկողը՝ լրտեսները: Այդ տեսակ «փիճ» ընկեցիկ թուղթ միայն Կ. ի չէ զրկուած, այլ և քանի մը հայերու ալ:

Զըլլայ թէ սխալ հասկցուին գրածներս: Աս վայրկեան մը անգամ չեմ կասկած իր թէ տեղոյս

վերակազմակերպումը աս անկախ, ապակեգործական խումբը, որ զԱրժիար անպայման «աղտոտ» մարդ (թէեւ ոչ ապացուցուած լրտես) կը դիտէ, որ տեղույս խումբը տեսակ մը «կեդրոն» կը ներկայացնէ՝ ու է կապ ունենայ տաճիկ ոստիկանութեան հետ կամ անոր ձեռքը գործիք ըլլալ... երբէք, ես աս չեմ ընդունիր: Միայն սաչափը կը սեմ որ ասոնք անկեղծօրէն «գործ» մը ընելու» համար՝ ստակի նեղութիւն կրեցին և բաւական միամիտ ըլլալով՝ դիմեցին կարմիր կնիքին, իսկ ուրկէ անմիջապէս օգտուեցան Համիտի լրտեսները և իրենք ալ ասպարէզ եկան:

Ասանկ զուգահիշումներն մը բաւ է որ հրէշ յեղափոխական լրտեսները իրենց հակառակորդները և ուսական գործիք անուանեն, բայց իմ խիղճս չը թոյլատրեր փոքրիկ զուգահիշումներն անոր էքսքլուաթէ ընել կամ զօշաքաղել: Ատ ստոր արհեստը կը թողում Մարտի և նոր կեանքի խմբագիրներուն:

Բանտարկութիւնները շարաթէ մը ի վեր նորէն շատցան: Էյուպէն միայն 4—5 հոգի են ձերբակալած: Գում-Գաիու, Սամաթիա և այլն շարաթ մըն է սուրսափի մէջ են: Հանդիպողը կը ձերբակալեն: Բանտերը նորէն լեցուեցր են: Վերակազմակերպութիւնը» ձեռք են անցուցեր և իմացեր են որ Վոսփորի մէջ գիւղերը կը բնակի: Շիրքէթի նաւերը լեցուն են քոմիսէրներով ու լրտեսներով... կըսեն որ ձերբակալած են զէվզէկ տրապիզօնցի մը Տ. և անկէ աւելի զէվզէկ կին մը... Աս պատու կինը մատներ է Տէր Ոսկի լրտես քահանան: Գէօնան՝ Օրմանը որ չի տեսներ իր լրտես քահանան:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԻՆԵՐՈՒ ԲԱԺԻՆԸ

(Շար. Ասխուրի քիւիս և Վեր)

Անհատական շահու կամ հաճելի ձեւանալու համար կատարուած այս կարգի անբարոյականացումը մինչեւ ո՞ր կրնան յանդիլ, և այդ վատութիւնները յանձն առնող ազնուաշուք տիկինները դեռ ինչե՞ր կրնան նուիրել տաճկաց հիւպատոսին, այդ կէտերուն վրայ չեմ ուզեր ծանրանալ հոս: Իմ հասկնցնել ուզածս ուրիշ բան է:

Ո՞վ կը տարակուսի թէ, երբ հայ կինը մեր մամուլին մէջ երեւցած ըլլար իբրեւ ազատ խորհող ու գործող տարր մը, անկաշկանդ և գոնէ իր սեռին անաչառ քննադատը, գերազանցապէս պիտի բարեւաւէր հայ գե-

ւերկու յիշած բանտարկեալներն ալ անվերջ զէվզէկ, պարծենկոտ ու պօշպօղազ անձեր են, որով և շատերու սուրը կրնան քանդել:

Ապտինուր պէյն ալ կծիկը դրաւ: Պեւական խորհուրդի քաղաքապետական բաժնի ատենադպիրներն էր, գիրքի կարողութեան և բաւական ալ շնորհքով անձ մը: Իր զուակներովը միասին զինքը կը նետէ ֆրանսական պահակախումբն անկէ գեպպանի: Իմացներով մակոյկով կանցնի Մեսաթուրի շրջանաւոր մէջ: Կառավարութիւնը կիմանայ: Շատ մը լրտեսներ ու փաշաներ կուգան զինքը համոզելու որ նորէն ելլայ ընդունիր:

Ու մարդը գնաց ազատ, արձակ ապրելու և թերեւս Համիտի գլխուն նոր փորձանք մը դառնալու իբր մէօն թիւրք: Նկատելու արժանի է որ մինչեւ օրս ամէն փախող անգլիական նաւերը և պահակախումբը կը դիմէին. ու աս առաջին դէպքն է որ գաղղիական պահակախումբը դիմող մը եղաւ:

ԲԱԺ

ՓԱՐԻՋԵԱՆ ՔՐՈՆԻԿ

Արդարացումը ընդհանուր է. «է՛, եղբայր, մարդը ի՞նչ ընէ, ա՛խ չէ որ պէտք է ապրի»: այդ պատասխանը ստացած եմ իւրաքանչիւր անգամ երբ ինձ պատահած է զխտորութիւններ ընել հրապարակագրի մը բռնած վատթար ուղղութեան վրայ, հասարակութեան բարոյականութիւնը անխղճօրէն շահագործող և ընդհանուր կերպով հայերու այս կամ այն դասին անունն ու համբաւը արատուորող պորտաբոյժներու շահատակութիւններուն վրայ, հրապարակը կեղտոտող խմբագիրը — հրատարակիչ երեւալ ցանկացողներու ուսանց ապրկարութեան վրայ եւ այլն: Պատասխան մը՝ որ սակայն «ա՛խ»ով,

ղեցիկ սեռը, և այն կիները որոնք այսօր հասարակաց քննադատութեանն ապահով, ամենէն լիտի երեսպաշտութիւններով վարդանի օրերուն վառիկառուն բայց գիւցազն տիկնանց յիշատակը կը նախատեն լրբօրէն, իրենց ոսկիները չի վտանգելու համար, որոնք մութին մէջ կը թապալակին, յարգին տակէն ջուր կը քաղեն փիւս տաճկի մը սիրտը շահելու համար, նոյնիսկ իրենց սեռին կողմէ լքուելու և հրապարակախայտապետութեան արհաւիրքը պիտի ունենային իրենց առջեւ, ամէն անգամ երբ հասարակական պոռնկութեան անդունդին մտնենային:

Չէ՛, պէտք է խզել այս լուրթիւնը: Ինչչէ՞ն կը վախնաք: Պրիւսիայի Ծը շատոնց անցած է, Հիմակ ալ չիկայ Շօմէթ մը որ ըսէ թէ՛ ժողովրդեան ատենակալներուն խորհրդակցութեան համար հաւաքուած տեղը մտնել արգելուած է կիններուն, այն էակներուն՝ որոնք բնութիւնը կը նախասեն:

Խիստ երկար «ա՛խ»ով մը կը մկըրտէ լուրջ և բանիմաց հայը: Թղթակիցները, ստէպ, իրենց պաշտօնը ի չարն գործ կը դնեն, չունենալով զիտակցութիւն անոր բարձրութեան, մտնելով իրենց մատակարանէն ու բարոյականէն բոլորովին անկախ խնդիրներու մէջ: Աւելի անբարոյականացուցիչ է սակայն այն երեւոյթը, որ մեր Մամուլի վարչութիւններէն շատեր, քիչ բացառութեամբ, աւելի նուազ գիտակցութիւն ունին իրենց հրատարակութիւններու պատասխանատուութեան ծանրութեան վրայ: այնպէս որ կարծես զատելու անկարող են, գոնէ գուշակէին յօդուածի մը, գրութեան մը բնոյթէն անոր անաչառ կամ քննախնդիր ոգին ու ըստ այնմ տնօրինէին անոր հրատարակութիւնը կամ ո՛չ: Թղթակիցներու դէմ լինելիք այս դատաստանը հարկաւոր է թերթ մը անկախ պահելու և զայն իր կոչման բարձրութեան վրայ դնելու համար: Կեղծ պորտաբոյժին հրապարակի վրայ նպաստաւոր հող գտնելը իրաւ է որ ուշ կամ կանուխ երեւան կողոյց և կը հայածուի, սակայն մինչեւ այդ վայրկեանը՝ շատ մը քննախնդրութիւններ յազուրդ գտած են և առողջ ուժեր ջլատուած են: Ո՞ր էր թէ մենք ալ գտնուէինք այնպիսի պայմաններու մէջ, ուր վայրահաջի մը, մտքով սնանկի մը, սգէտ իմաստակի մը և վերջապէս չար ու խոտնակիչ հոգիի մը բարբաջանքները ճաթած արձագանք միայն: Այնքան քիչ է մեր մէջ անկախ կարծիքներու, առողջ մտքերու և հասուն դատողութիւններու քանակը, որ՝ յաճախ, այս իմացական սնանկութեան առջեւ՝ յուսահատելու կերթանք: Այս բացասականութեան մէջ, լափիւրիթն զարձած՝ անճրկած հրապարակագրութեան գոյութեամբ, խաչագործ կը փառաւորուի, արժանաւորը կ'արտաւորուի և ճշմարտութիւնը կը հալածուի: Տգէտին վարձատրուելը՝ կարողին ու հմուտին սեղատուութեան հետեւանքն է. ու ի վնաս լաւագոյններուն՝ չար ուժը խիստ ուճացած է: Նկատողութիւններու շարքը կարելի է զեռ երկարել. սակայն անցնինք իրականութեան քր աւելի համոզիչ է և աւելի ջախջախիչ:

Ձեր այդ անարկու հակառակորդին պէս, այսօր ոչ ոք պիտի պոռայ ձեր երեսին. «լիտի կիներ, որ կուզէք էրիկ մարդ ըլլալ, ծրագրիներ առաջարկել, գրել կուտել ու կքրել, յիշեցէք որ, եթէ ժանձնաւոր մը եղաւ, որովհետեւ կարողուած մը կար»: Չէ՛, այս անտարամբան ամբաստանողին արձակած դատակնիքը ժամանակն ու քաղաքակրթութիւնը վաղուց ջնջեցին ձեր ճակատն: Այսօր ընդհակառակը, ձեռնէ կը պահանջուի հասարակապէս աշխատել, խօսիլ, գրել ու կուտել մարդկային ազգին յառաջդիմութեան վեհ գործին համար: Ան ալ իր աշխատութեան բաժանումներն ունի: Եթէ դեռ չէք համարձակել խորհրդարաններէ ներս մտնել, երեսփոխաններու աթոռը բազմել, վարչական մարմին մը թեկնածու ըլլալ, անոնց չափ լայն ու կարեւոր, և թերեւս անոնցմէ աւելի անդայ ու սնասնման ասպարէզ մը ունիք ձեր առջեւ. ընտանիքը, դատարարակութիւնը մանուկ-

Սիւեոն Հախուսեան. — Ժամանակէ մը ի վեր նոր-Պար կովկասահայ թերթին մէջ Ս. Հախուսեան ստորագրութեամբ յօդուածներ կերելին, Փարիզէն գրուած: Այլ ինչեր չի գրեց այս մարդուկը, Աստուած իմ:

Դժբաղդութիւնը ունեցայ մանրամասն աչքէ անցնելու այս Պարոնին յօդուածները, ու իմ բոլոր բարիկամեցողութեամբ ուզեցի «անգրագէտ» մէկը չտեսնել Ս. Հախուսեանի մէջ, որովհետեւ կը մտածէի որ արժանիք մը գոյութիւն ունենալու էր, որ նոր-Պար զայն իբր «մասնաւոր թղթակից» Փարիզ ուղարկած էր և արուեստահանդէսին համար: Կարգացի Դրամայի վերաբերեալ և ուրիշ իր մէկ քանի գրական յօդուածները, որոնցմէ թէեւ մեծ բան չհասկցայ, սակայն ատի եմ անհասկացողութեանս (՝) վերագրեցի: Դրական ճիշդութիւնը վերաբերեալ մէջ չմտնելու և րիշ գրուածքներու մէջ այլեւս, Ս. Հախուսեան. այլ շիտկէ շիտակ կըսէր թէ՛ ինք մեր հինգերորդ գարու գրական հայերու յաջորդն է և թէ՛ անոնք պիտի ողբային եթէ յարութիւն առնէին ու տեսնէին որ իրենց յաջորդները անոնց տուած լեզուն «խայտառակել են»: հոս այլեւս պէտք չկար վարանելու, այլ պէտք էր համոզուիլ որ Ս. Հախուսեան հայերու «մեծ գրագէտն» է, ու առաւել քան ուրիշ մէկը իրաւունք ունէր յոբելեանի մը, որ հիմա մեր մէջ «մտա» է դարձեր. — ամենուս պարտքն է ուրեմն, փութալ, վազել ու նոր-Պարին գրել, որ այդ բանին ձեռնարկ է: — Ս. Հախուսեան յուսահատուած կերեւի տաճանի յսպասում մը, որ ուրիշները գինքը այդ «մեծ գրագէտի» տիտղոսը տան, ու ինքը զայդ հոշակելու կելլէ: Բայց ընտրած միջոցը սղորմելի է և անազնիւ. միջոց մը, որ ուրիշին արժանիքին նուաստացումին մէջ կորսնէ աղտոտ փառքը, կարգացէ նոր-Պարն այս Փարիզեան թղթակցներն որ եւ յօդուածը, և գրածիս վստահ եմ, որ պիտի համոզուիք:

Ս. Հախուսեան իր հաւասարը հայերու մէջ չգտնելու ֆրանսացիներու մէջ ալ հազու թէ: Կը յայտնէ կարծիքներ, զորս ֆրանսական գրագէտները յետոյ կը հաստատեն եղեր: օ. օ. օ.

Թող ներուի ինձ այս օրինակ գրական անունին տակ կծկող ազրուկներու վրայ ծանրանալ հրապարա-

ներու որոնք ապագայ վարիչները, դատաւորները, օրէնսդիրներն ու երեսփոխանները պիտի կազմեն ապահովապէս: Երբ անցեալները օրնուանիքի ազդեցութեան վրայ կը գրէի, մասնաւորապէս ջանացած էի զգացնել թէ՛ ո՞ր աստիճան ճշմարիտ էր Մեծն Նարոլէոնի դատարարակութեան ըմբռնումը և ի՞նչ հասկնցնել կուզէի մայրեր պատարակութեան ըսելով Դէթ ձեր սեռին դատարարակութեամբ հետաքրքրուեցէք, յայտնեցէք: Վիճեցէք, ծրագրեցէք ձեր ըմբռնումը սղջկանց դատարարակութեան, բնուանիքի վերանորոգման նկատմամբ: Մինչեւ այսօր էրիկ մարդիկ կըսէն ու դեռ անոնք են որ, ազդիկներու դատարարակութեամբ կը զբաղին, անոնց կրթութեան ծրագրերը կը գծեն ու շատ տեղեր կը գործադրեն ալ: Բայց իրական սեռը իրեն յատուկ կողմերը ունի և անոնց մշակումովն է միայն, որ կինը իրաւացի բան մը կարծէ: Այսօրուան մեր ազդիկներու դատարարակութեան մէջ բուն իսկ այդ

կաւ, քանի որ չարիքը անհատական չէ բնաւ ալ հասարակական: Եթէ մեր խօսքերը տասնեակ մը ընթերցողներու սրտին մէջ կասկած մը իսկ ձնացունեն դէպի այս մտքով ու բարոյականով անօթիներու բնօթիքին վրայ, գնահատելի օգնութիւն մը ստացուած լինելուն գոհացումը պիտի ունենանք:

Ս. Հախումեան տեսէ՞ք թղթակցի պաշտօնը ինչպէս կը մտնէ. կը ներկայանայ մեզ իբր յանձնակատար. «քօմօսիստներ», առեւտուր բնոյ. ու այնքան տաքիակ կերպով որ դէպի իր անձը՝ զգուշացնէ աւելի արգահասանք կը ծնուցանէ: «Ի գիտութիւն մեր հայրենակիցներին» — նոր-Պարս, արտի 1900 համար 62 — անունով յօդուածին մէջ, Փարիզի ցուցահանդէսին վրայ գործնական տեղեկութիւններ տալու կեղծած պահուն՝ հետեւեալ «նէքլամ»ը կը ընէ. . . վերոյիշեալ հասցէով տանը գտնուում են կահաւորուած սենեակներ արժողութեամբ օրական 5 ֆրանքից մինչեւ 10 ֆրանք (մտաւորապէս 2 րուպլոց — 4րդ) եւ եթէ այդտեղ ազատ բնակարան չլինի, տանտէրերն եկողներին համար ուրիշ տեղ բնակարան կը գտնեն նոյն գնով: Ծաշն արժէ 2 1/2 ֆրանք, ընթրիքը՝ նոյնը. . . եւն: Այս խօսքերէն յետոյ կաւելցնէ յանցաւոր գողի մը երկչոտութեամբ. «Իրտեմ, (ի՞նչպէս) անշուշտ մամուլի մէջ մուկեր դուրս կուգան, որոնք կսկսին փոստալ, թէ մենք մակընթացութեամբ ենք զբաղուում, երեւիչաւոր գողութեամբ լինելով, բայց մենք ցանկանալով օգտակար լինել մեր հայրենակիցներին, արհամարհել ենք այդ լուսնահաջը», եւն: Հախումեանի այս կանխակալ խօսքերը բաւական են իր անկեղծութիւնը կասկածանքի առկայութեան, ու ի՞նչպէս չամբընար վատնալու որ եթէ «մամուլի մուկերի լուսնահաջը» չլինի ալ բան մը որ զինքը այնքան զբաղեցուցած է իր կեղծիքը յերկրած պահուն իրականութիւնը զինքը պիտի սպտակէ: Նախ որ իր տուած հասցէն իր մի բնակած տան հասցէն է, երկրորդ այդ տունը 10 ֆրանքից սենեակ չի գտնուիր. ինքը արգեօք իր կեանքին մէջ մէկ զինքի համար այդքան վճարած ունի: Ահաւասիկ մէկը որ թղթակցի անունին առկա պատար կը քաշէ մասնաւորապէս արուեստահանդէս գալ փափաքող՝ սակայն մեծ գումար մը տրամադրելի չունեցողներուն առջեւ, 1 ֆր: 15 սանդիմ ճաշ

ամեն կողմ կայ եւ 1 ֆր. 50 սնդիմ խիստ լաւը: Հացի խնդրը հո՞ս ալ թղթակցի բարոյականին վրայ ազատած է. . .

Ս. Հախումեան հմուտ հաշուապետ ալ կերեւի միեւնոյն յօդուածին մէջ կը գրէ՝ «մէկ րուպլին րազկացած է 100 կոպէկից, իսկ ֆրանսական ֆրանկը 100 սուրց (ա՛, 100 սուրց 5 ֆր. կընէ Պարսն թուագէտ) սակայն մի սուրց դրամ չկայ (գոյցէ իր գրպանը. . . ո՞րքան կը փափարի, անտարակոյս այնքան մինչեւ որ իր գրպանէն աւելի ծակ խելքը լեցուի, եւն): Ս. Հախումեանի խորհուրդ պիտի տայինք որ իր անձին գիտակցութիւնը ունենար, ու իրեն «յորբելեան» մը կատարել տալու ցանկութիւն մը որ անհրաժեշտ է իր խիղճըն ու բարոյականը առողջ պահելու համար: Ազգաստութիւնը մեղք չէ. այլ անբարոյականութիւնը: Զգաձգութիւններ ալ ընելու պէտք չի կայ չտեսածն ու չհասկցածը գրելու. բոլորնազգոսիկ մտադրապարտ մը թէ, թղթակցի մը համար միթէ նիթ կը պակսի գրելու, այն ալ Փարիզի մէջ ու ցուցահանդէսին վրայ. եթէ չհասկցած բաներուն վրայ ալ ծանօթանալ ուղէ՛ք Փարիզի մէջ շատ ալ մարդ կայ:

ԴԱՌՆԻԾ

(Մնացածը յարողով)

ԴԱՒԱՃԱՆԻՆ ՎԵՐՋԻՆ ԼՐՔՈՒԹԻՒՆԸ

«Մարտ» թիւ 19 (Յունիս) Ա. Արփիարեան ստորագրութեան տակ նոր յօդուածով մը ցոյց կուտար թէ ինքը, Հնչակեան վերակազմեալ կուսակցութիւնը, ձեռք առած է մատնութիւններու շարք մը, տապալել փորձելու համար Հայ Յեզ. Դաշնակցութիւնը և անոր անդամները: Առանց երկար բարակ կանգ առնելու այս գէպքին առջեւ, ընթերցողներու կը ներկայացնեմ «Մարտ» վերջին համարին տողերը, և զատողութիւնը և կամ հետեւութիւնը կը ձգեմ անաչառ քննադատին:

որոնք պիտի աւելն, վանեն մեր մէջէն այն ազգայնաբարբերն ու կրքի անպարկեշտ պոթիկուսիտներ, որոնք կարծես մեր այսօրուան հացն ու միսը եղած են, ինչպէս զարնան փոթորիկ մը որ երկնքի ջրի մէջ պայծառութիւնը պահ մը խռովելէ ետքը, կը ջրուէ, կաւլէ զայն ծածկող ամպերու հերձը, ընդոյր ու թելիւ:

Առանց փոթորիկի չըլլար այս յի զաշարժումը, և գուք ալ փոթորիկներու պիտի հանդիպիք: Որովհետեւ մեր մէջ, երբ աղջիկներու դատարարական խօսք կընես, աշխարհի չորս անկիւններէն ձայներ կը բարձրանան. «Չզուշայէք, կըսեն, ընտանիքը պիտի կործանեն», կինը պիտի այլասեւեն: Ինչո՞ւ: — Որովհետեւ այդ մարդոց զաղափարին համեմատ աղջիկ մը պէտք չունի դատարարականութեւ. քիչ մը կերակուր եկել, իր ապագայ էրկանը հաճելի ըլլալ, տան գործերը ստանել. անա իր բոլոր պաշտօնը իրենց ըմբռնումով:

«Իւսիֆեան, ատեն մը Վահանեան ծածկանունով Ամբրիկայ. . . յետոյ հիմակ կարծեմ Պարսկաստան զրկուած է: Իսկ Օննիկ Գերձակեանը հիմակ Արտաշէս Վաւան ծածկանունով Իւսիֆեանը կը շարունակէ Ամբրիկայ:»

Պ. Քաղաքի գէնքերուն խնդրը հրապարակով մատնելէն վերջը՝ չէի՞նք յուսար որ օր մընալ ելան ուրիշ գաղտնիքներ երեսան հանեն Արփիար և իրեն պնակալէզ հետեւորդները: Եւ ահա կատարուեցաւ այս ալ. Արփիար իր ստորագրութեան տակ և հրապարակով կը մատնէ աշխարհին թէ Իւսիֆեան հիմակ «Պարսկաստան զրկուած է»: Այս գէպքը անգամ մըն ալ չ'ապացուցանե՞ր թէ Արփիար ո՞ր աստիճանի գաղտնապահ է և թէ կը լրտեսէ յեղափոխական կուսակցութեանց գաղտնիքները: Բայց այսչափ չէ, սիրելի ընթերցող, այսչափ չէ ամենը, Արփիար նոյն յօդուածին մէջ սպառնալիք ալ կընէ հրապարակաւ ամբողջ կողմասի գործիչներուն, եթէ աստիճանը ճնշում չընեն իրենց երկրացիներուն վրայ և ետ չի կեցնեն պաշտօնական վաւերաթուղթեր հրապարակ հանելէ ի վրաս իրեն (Արփիարի), Այս սպառնալիքը չի՞ յիշեցնէր ձեզի այն հարցաքննութիւնը, որուն մէջ Արփիար իր ընկերները պարզապէս սպառնական ձեւով մատնած է. օրինակ՝ Տօքթ. Թիւրեքեանը, Վահրամ պէյը և ուրիշները: (Տես «Յս. ելուած Դրօշակ») : Ուրիշ ապացոյց մըն ալ ստիկայ:

Գալով այն վաւերաթուղթերուն, որոնց համար «կեղծ է» կընէ Արփիար, եւ կընամ հաստատել ժողովի մը առջեւ թէ անոր մտքով ՍՏՈՅԵՆ և վաւերական. և իմ փատեերս կընամ հաստատել վկայներով, որոնց մէկ մասը ողջ է: Գիտեմ նաեւ թէ անոնք

Սխալ է այս ըմբռնումը: Կինն ալ մեղի պէս հօգի մը ունի. իր թերութեանց պատասխանատու և իր առաքելութեան արժանաւոր տէրն է Կինակցի և մօր փառասիրէն ալ բարձր, որոնք անցողական, գիպուածական տիրոջներ են, զորս մտքը կը խլէ, բացակայութիւնը կը դադրեցնէ, որոնք ոմանց յատուկ են, ուրիշներու չեն, կայ յաւիտենական արարածի փառքը: Ուստի, իբրեւ մարդկային արարած, իրաւունք ունի իր սրտին ու մտքին կատարեալ կազմութիւնը պահանջելու:

Մեր ազգը մեծ դժբաղդութիւն մը ունի. միշտ բառերէն կը խաբուի: Լաւագոյն բաները երբեմն մեր մէջ կը կորսուին իրենց անունին պատճառաւ: Աղջիկ մը դատարարական անոր աստուածարանութիւն սորվեցընել չի նշանակեր. զայն իբր մարդկային էակ պատրաստելու մէջ կը կայանայ: Եւ տար համար, քանի մը կերակուր եկել, տղոց ասողութեան

ԳՈՂՏՈՒՍԵՆ Կ. Պօլսոյ ոստիկանութեան պաշտօնատեսէն, հայ լրտեսի մը միջոցով:

Այս առթիւ պէտք է ըսեմ թէ Մելքոն Կիրճեանը Օսմ. վարչութեան մը մէջ պաշտօնեայ չէ. այլ Օսմ. կառավարութեան կողմէ ԱՔՍՈՐՈՒՍԵՆ է: Արփիար ինքը լաւ գիտէ թէ Կիրճեանը բառ մը չի գիտեր տաճկերէն. և Օսմ. վարչութեան մը մէջ պաշտօնեայ ըլլալու համար պէտք է տաճկերէն գիտնալ բաւական շնորհքով կերպով: Արգեօք Արփիար իր հակառակորդներուն վրայ մուր քսելով պիտի վրէժ լուծէ. եթէ այսպէս է, կը ցաւում իր վիճակին վրայ:

Գիտցած ըլլաւ, Արփիար, որ եթէ քեզի համար գրուած բոլոր բաները սուտ են, և քու հարցաքննութեանը թարգմանութիւնը չի նսծու է, քեզ դատապարտելու համար բաւական են քու ստորագրութեանդ տակ իսկ հրատարակուած մեղադատարկութեամբ «Մարտ» վերջին համարին մէջ հրապարակ հանած մատնութիւնը և սպառնալիքը: Անցած օր բարեկամ մը ցուցուց ինձի քու մէկ գիրք, որով կը խնդրէիր որ քաղաքիս մէջ ժողով մը գումարելով «Պատուոյ տեսան» պահանջեն: Ասիկայ չ'ապացուցանե՞ր թէ «Մարտ» սինակներու մէջ հրատարակուած բոլոր նամակներն ալ քու հրահանգովդ հրատարակուած են: ()

ՍԱՄՓՍՈՆ

N. Քաղաք — (—)

() Բացի Սամփոսէն, խմբագրութեան գիտել է և մէկ ուրիշ Պարս Արփիարի գաւաճան լինելը ապացուցանելու համար: Երկուսն էլ Արփիարին ճանաչում են, գիտեն նրա գործունէութիւնը եւ պատրաստ են ամեն մի ժողովի առջև սպառնալիք, նոյնիսկ եթէ դատարարները միայն Արփիարի չէզոք բարեկամները լինեն:

Մ. Խ.

կանացի յատկութեանց մշակումն է որ անփոփոխ թողուած է: Ինչո՞ւ չէք պահանջիր ձեր իրաւունքը, ինչո՞ւ չէք փառքի գոնէ ձեր գաւառի պաշտպանութեան գործին: Այդ ալ էրիկ մարդիկը պէտք է ձեզ յիշեցնեն:

Սրտատահմանի հայ մամուլը ամէն պարտականութիւն պիտի ցուցնէ իր սինակները ձեր առջին բանալու համար, եթէ մեր հանրային բարբերուն մէջ այսօր չատ մը տխուր ու վհատեցուցիչ երեւոյթներ կը նշմարենք, ամէնքս ալ, պզտիկով, մեծով, միւնչեւ մեր ծուծերը համոզուած ենք որ, անոնց մէջ պատասխանատուութեան անազին բաժին մը ունիք գուք. կիները, ձեր սանտառներ անտարբերութեամբ: Ինձի համար Շաքէի մը հերոսութեան, Չարուհիի մը անձնութեան չափ թանկագին, անոր չափ չքնաղ արժէք մը ունի կնոջ մը իր սեռին դատարարականութեան համար կատարած ջանքերը, որոնք անվրէպ հազարաւոր Շաքէներ ու Չարուհիներ պիտի ծնուցանեն, և

հսկել, աղօթել, սիրել ու մխիթարելը չի բաւեր: Մօր մը ասոնք պէտք են, բայց առկէ աւելին անհրաժեշտ է. այսինքն անաշնորհել, կրթել, հետեւաբար գիտնալ:

Առանց գիտնալու չի կայ մայր, կուսակալ մայր:

Մամուլը անազին ուժ մըն է, որ կընայ մեծապէս սատարել ձեզ ճշմարիտ մայրիկ պատրաստելու գործին: Պէտք է գիտնալ այդ ուժէն օգտուիլ, և ուրիշներուն ալ օգտակար դարձնել զայն: Ա՛լ կը սպասենք որ հայ կինը անգործութեան ընդարմացած ուղեղին մշուշը թօթափէ, և հրապարակ պայ իր ուժերը ամփոփած: Դրական հրաշակներուն չենք սպասեր իրմէ գոնէ առ այժմ, Դրական արգիւնք է մեր ուզածը, այսինքն սերունդներու գաստարարականութիւնը և ստոր համար հարկ եղած միջոցներուն ձեռնարկութիւնը:

ԼԵՒՈՆ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Ֆիլիպ, 2 Յունիս — (—)

ԱԶԳԱՅԻՆ ՊԱՅԱՆՁԸ

Երեկ բարեկամներէս մէկուն հանդիպեցայ, քմծիծաղով մը հարցուց «ազգային պահանջը կարգացի՞ր»...

տեղերու հայերը, ըսել է հազիւ 20—25 անձ պատուոյ ատեն կը պահանջեն ու ատենց ալ մէկ մասը չէզոքակերպ Մարտականներ են ինչպէս Մանչեսթրի ատենադպիրը...

և չին զօրքերու հետ, մեծ զուսներ պատճառելով անոնց. վերջը երկաթուղիի գծին ոչնչացած լինելնցին վերադառնալ...

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Տարածուի իմացութեան մէջ կարելի է բաժանորդ գրուիլ Փարիզ հրատարակող «Հայկական ժողովրդական երգերի հաւաքածոյին»...

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Լօնտրայի հայ գաղութը Տիկիին Կլատսթոնի դազադի վրայ սանդնագործուած ծածկոց մը դրած է...